ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№4230-Ա « 16 » հոկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի Հ.6023-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով լ/ա Սիրանուշ Ասատրյանի 14.10.2025թ. հ.Դ-113408-25 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2010 թվականի դեկտեմբերի 27-ի «Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին» հ.6023-Ա որոշման հավելվածի 10-րդ կետը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
16.10. 2025թ.
հ.4230-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ՝ ի դեմս ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Գ. Հովսեփյան փողոց, հեռուստաաշտարակին հարող տարածք	հողամաս	Գ. Հովսեփյան փողոցի հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող հողամասի /վկ. հ.20062025-01-0292/ բաժանման հատակագծով առանձնացվող 358.0քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Գ. Հովսեփյան փողոց, հ.66/4	010938QMNX8J	
2	Վարդան Սարգսյան /լիազորված անձ/ Անահիտ Գրիգորյան	Ա. Արմենակյան փողոց, հ.125 շենք, հ.16/1 և հ.16/2	տարածք	Անահիտ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող, Ա. Արմենակյան փողոցի հ.125 շենքի հ.16/1 և հ.16/2 հասցեներում գտնվող տարածքներին /վկ.հ. 27072022-01-0052 և հ.29072022-01-0298/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Ա. Արմենակյան փողոց, հ.125 շենք, շինություն հ.16/1	01093HV4DADS	
3	Գեղամ Պողոսյան	Աշոտի փողոց, հ.13	հողամաս	Գեղամ Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Աշոտի փողոցի հ.13 հասցեում գտնվող հողամասի բաժանման հատակագծով առանձնացվող 200քմ մակերեսով մասին /վկ. հ.02102025-01-0461/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 4-րդ փողոց, 4-րդ նրբանցք, հ.13/1	01073E9NL5JA	
4	Գեղամ Պողոսյան	Աշոտի փողոց, հ.13	հողամաս	Գեղամ Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Աշոտի փողոցի հ.13 հասցեում գտնվող հողամասի մնացորդային 200քմ մակերեսով մասին /վկ. հ.02102025-01-0461/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 4-րդ փողոց, 4-րդ նրբանցք, հ.13	010736TFSJ5M	

5	Սիրանուշ Ասատրյան /լիազորված անձ/ «ԻՏԱՐԿՈ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ	Մամիկոնյանց փողոց, հ.40	տարածք	«ԻՏԱՐԿՈ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Մամիկոնյանց փողոցի հ.40 հասցեում գտնվող տարածքին /վկ. հ.08102025-01-0160/ տրամադրել հասցե՝ Մամիկոնյանց փողոց, հ.40 շենք, շինություն հ.53	010336Q8ENYL	
6	Մայիս Ամոյան	Մուշական փողոց, հ.88	հողամաս	Մայիս Ամոյանին սեփականության իրավունքով պատկանող, Մուշական փողոցի հ.88 հասցեում գտնվող հողամասին /վկ. հ.14062023-01-0171/ տրամադրել հասցե՝ Մուշական թաղամաս, 7-րդ փողոց, հ.25	01053NCVNQ99	
7	Արթուր, Սուսաննա, Ռաֆիկ, Ռուզաննա և Թաթուլ Եղիազարյաններ	Հ. Քաջազնունու /Կուզնեցովի/ փողոց, հ.9 շենք, հ.Բ	բնակարան	Հ. Քաջազնունու /Կուզնեցովի/ փողոցի հ.9 շենքի հ.Բ հասցեում գտնվող բնակարանին /սեփ. վկ. հ.749496, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 25.09.2025թ. հ.4337 վկայագիր/ տրամադրել հասցե՝ Հ. Քաջազնունու փողոց, հ.9 շենք, բն.113	01063RHCFJDJ	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**